ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ 2020 թվականի զբոսաշրջության զարգացման

պետական ծրագրի կատարման վերաբերյալ

Զբոսաշրջության զարգացման ծրագիրը միտված է Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ճանաչելիության և մրցունակության բարձրացմանը: Ծրագրային միջոցառումներն ուղղվում են զբոսաշրջային այցելությունների դինամիկ աճի ապահովմանը:

Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները՝

«Զբոսաշրջության զարգացման ոլորտում պետական քաղաքականության մշակման և դրա կատարման համակարգման, պետական ծրագրերի պլանավորման, մշակման, իրականացման և մոնիտորինգի (վերահսկման) ծառայություններ» միջոցառման համար տարեսկզբին նախատեսվել էր 125,684.0 հազար դրամ, ճշտված պլանը կազմել է 124,053.2 հազար դրամ, դրամարկղային ծախսերը՝ 119,898.2 հազար դրամ: Նշված միջոցառումը կատարվել է 96.6%-ով կամ 4,155.0 հազար դրամով պակաս: Շեղումը պայմանավորված է նրանով, որ մրցույթների արդյունքում ապրանքները և ծառայությունները ձեռք են բերվել նախատեսվածից ցածր գներով:

«Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» միջոցառման համար տարեսկզբին նախատեսվել էր 200,000.0 հազար դրամ, ճշտված պլանը՝ 20,000.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը՝ 8,189.2 հազար դրամ: 2020 թվականի ճշտված պլանի և դրամարկղային ծախսի միջև շեղումը կազմել է 11,810.8 հազար դրամ: Շեղումը պայմանավորված է նրանով, որ COVID 19-ի և ռազմական դրության հետևանքով բուկլետները նախատեսվածից քիչ են տպագրվել, և նշված միջոցները նախատեսվել էին վերաբաշխել որոշակի միջոցառումների իրականացման նպատակով, սակայն ժամանակի սղության պատճառով գործընթացը չի իրականացվել:

Կորոնավիրուսային համաճարակի պայմաններում տեղի ունեցած փոփոխությունների արդյունքում (ՀՀ կառավարության 16 մարտի 2020 թվականի N 298-Ն որոշմամբ ՀՀ ողջ տարածքով 16.03.2020թ հայտարարվել էր արտակարգ դրություն), մատուցված ծառայությունների ձեռք բերման գնման կազմակերպման գործընթացը դարձել է անհնար:

Պայմանավորված համավարակով և երկրում հաստատված ռազմական դրությամբ՝ Հայաստան այցելած զբոսաշրջիկների թիվը 2020 թվականին կազմել է 375,216, ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է մոտ 80%-ով:

Ծրագրի հիմնական նպատակն է նպաստել՝

- Հայաստան զբոսաշրջային այցելությունների շարունակական դինամիկ աճին,
- Հայաստանի կայուն և համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը,
- ազգային եկամտի ավելացմանը,
- բնակչության կենսամակարդակի բարձրացմանը,
- Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի համաշխարհային ճանաչելիության բարձրացմանը,
- Հայաստանի, որպես աշխարհում գրավիչ զբոսաշրջային երկրի նկարագրի ձևավորմանը:

Ծրագրի նպատակին հասնելու համար պետք է լուծվեն հետևյալ խնդիրները.

- ամրապնդել և շարունակական բարձրացնել Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի մրցունակությունը,
- դիվերսիֆիկացնել հայկական զբոսաշրջային արդյունքը, ձևավորել նոր, մրցունակ զբոսաշրջային արդյունքներ,
- դիվերսիֆիկացնել Հայաստանի ու հայկական զբոսաշրջային արդյունքի շուկաները,
- համաշխարհային շուկայում ամրապնդել, զարգացնել և խթանել Հայաստանի նկարագիրը՝ որպես կայուն, ապահով, ձեռնարկատիրության, ներդրումների և զբոսաշրջության համար բարենպաստ ու գրավիչ երկիր,
- բարելավել և զարգացնել ենթակառուցվածքները,
- ամրապնդել և շարունակական բարձրացնել ծառայությունների որակը,
- զարգացնել մարդկային ռեսուրսները,
- աջակցել զբոսաշրջության բնագավառում գործող, մասնավոր հատվածը ներկայացնող կազմակերպությունների գործունեությանը,
- ամրապնդել և շարունակական ակտիվացնել միջազգային համագործակցությունը:

Միջոցառման շրջանակներում իրականացվել են՝

- Զբոսաշրջության ոլորտի ճշգրիտ վիճակագրական տվյալների հավաքագրման և վերլուծության նպատակով ներդրվել է սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգչային ծրագիր, որը հնարավորություն է ընձեռելու ստանալ տեղեկատվություն Հայաստան այցելած զբոսաշրջիկների թվաքանակի, քաղաքացիության, սեռատարիքային խմբերի, սահմանային անցման կետերի և զբոսաշրջային կրկնվող այցելությունների քանակի վերաբերյալ:

- Տպագրվել են թվով 7,500 հատ տեղեկատվական թռուցիկներ, Հայաստանի զբոսաշրջային գրավչությունները ներկայացնող այլ գովազդատեղեկատվական նյութեր:

«Հայաստանի զբոսաշրջության զարգացման հիմնադրամին աջակցություն» միջոցառման համար ճշտված պլանը կազմել է 41,000.0 հազար դրամ, դրամարկղային ծախսերը՝ 36,332.4 հազար դրամ: Նշված միջոցառումը կատարվել է 88.6%-ով կամ 4,667.6 հազար դրամով պակաս: Նախատեսված միջոցներն ՀՀ կառավարության 13.11.2020թ. թիվ 2099-Ն որոշմամբ ուղղվել են լուծարային գործընթացով պայմանավորված հարկային պարտավորությունների մարմանը: Շեղումը պայմանավորված է առաջադրված հարկային պարտավորությունների (տույժ/տուգանք) և կատարողական ծախսերի մարման արդյունքում առաջացած տնտեսումներով:Նշված միջոցառումը սկսել է գործել 2020թ-ին:

«Տեղական տնտեսությունների և ենթակառուցվածքների զարգացում» ծրագիր

ՀՀ և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի միջև 2016 թվականի փետրվարի 23-ին կնքվել է N8572-ԱՄ վարկային պայմանգիրը, որը վավերացվել է ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2016 թվականի դեկտեմբերի 16-ին: «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացում» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) իրականացվում է Արարատ, Վայոց Ձոր, Սյունիք, Կոտայք, Լոռի և Շիրակ մարզերում: Ծրագրի բյուջեն 2016-2021 թվականների համար կազմում է 68,720 հազար ԱՄՆ դոլար (55,000 հազար ԱՄՆ դոլար վարկային միջոցներ և 13,720 հազար ԱՄՆ դոլար ՀՀ կառավարության համաֆինանսավորում):

2020 թվականին շարունակվել են իրականացվել աշխատանքներ՝ Խոր Վիրապ վանքի տարածքի բարեկարգում, «Արենի գինու հյուրանոց համալիրի» կոմունիկացիոն համակարգերի կառուցում, Գորիս համայնքի ժառանգության հանգույցի վերականգնում՝ Գորիսի Վարարակն գետի աջափնյա հատվածի վերականգնում և Գորիս քաղաքի կենտրոնական մասի պատմական բնակելի տների վերանորոգում: Ընթացքում են՝ Գառնի տուրիստական գոտում «Քարերի սիմֆոնիա» բնական հուշարձան տանող ճանապարհի վերականգնումը, Հայաստանի պատմական մայրաքաղաք Դվինի հուշարձանների մասնակի վերականգնումը և ամրակայումը, Երևան- Լանջազատ-Գառնի տանող ճանապարհի վերակառուցումը:

«Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի կառավարում» միջոցառման համար տարեսկզբին նախատեսվել էր 55,451.3 հազար դրամ, ճշտված պլանը կազմել է 46,950.3 հազար դրամ, դրամարկղային ծախսերը՝ 35,784.8 հազար դրամ: Նշված միջոցառումը կատարվել է 76.2%-ով կամ

11,165.5 հազար դրամով պակաս: Շեղումը պայմանավորված է մրցույթների արդյունքում ապրանքների և ծառայությունների՝ նախատեսվածից ավելի ցածր գնով ձեռքբերմամբ, ինչպես նաև տեղական գործուղումների քիչ քանակով՝ կապված արտակարգ դրության հետ: Նշված միջոցներն ուղղվել են աշխատավարձի վճարմանը և տրանսպորտային նյութերի ձեռքբերմանը:

«Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում ՀՀ տարբեր մարզերում զբոսաշրջության հետ կապված ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված միջոցառումներ» միջոցառման համար տարեսկզբին նախատեսվել էր 5,922,757.7 հազար դրամ, ճշտված պլանը կազմել է 2,357,656.5 հազար դրամ, դրամարկղային ծախսերը՝ 2,031,015.1 հազար դրամ: Նշված միջոցառումը կատարվել է 86.1%-ով կամ 326,641.4 հազար դրամով պակաս: Շեղումը պայմանավորված է նրանով, որ համավարակի և ռազմական դրության հետևանքով 5 ծրագրերում աշխատանքները ժամանակավոր դադարեցվել էին և տարվա ընթացքում նախատեսվածից պակաս աշխատանքներ են կատարվել: Թերակատարվել է նաև տեխնիկական վերահսկման աշխատանքները: Տարվա ընթացքում սկսվել են շինարարական աշխատանքները 7 օբյեկտներում հետևյալ մարզերում՝ Արարատ ՝ 1 ծրագիր, Կոտայք – 1 ծրագիր, Սյունիք – 2 ծրագիր, Վայոց ձոր - 3 ծրագիր: Ավարտվել են շինարարական աշխատանքները 5 օբյեկտներում հետևյալ մարզերում՝ Արարատ ՝ 1 ծրագիր, Սյունիք – 1 ծրագիր, Վայոց ձոր - 3 ծրագիր: Շինարարական աշխատանքների գծով պլանը կատարվել է 86.0%-ով: Թերակատարումը պայմանավորված է ծրագրերի ուշ հաստատումով, ինչի հետևանքով 5 ծրագրերում աշխատանքները ժամանակին չեն սկսվել, և տարվա ընթացքում նախատեսվածից պակաս շինարարական աշխատանքներ են կատարվել: Խորհրդատվական ծառայությունների գծով շարունակվել է նախագծերի մշակումը: Բոլոր շինարարական աշխատանքները վերահսկվել են նախագծերի հեղինակների եւ տեխնիկական վերահսկիչների կողմից: Անցկացվել է ֆինանսական աուդիտը: Խորհրդատվական ծառայությունների գծով պլանը կատարվել է 88.3%-ով: Թերակատարումը տեղի է ունեցել, քանի որ նոր օբյեկտների նախագծային աշխատանքները երկարաձգվել են անհրաժեշտ համաձայնեցումների ուշացման պատճառով: Տեխնիկական վերահսկման աշխատանքների գծով թերակատարումը տեղի է ունեցել շինարարական աշխատանքներին զուգահեռ: 2019 թվականին նշված միջոցառման դրամարկղային ծախսերը կազմել են 1,714,125.1 հազար դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերն աճել են 18.5%-ով կամ 316,890.0 հազար դրամով:

Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման ծրագիր

«Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման 23-րդ միջոցառման շրջանակներում իրականացվող աջակցության տրամադրում» միջոցառման համար ճշտված պլանը կազմել է 3,300,000.0 հազար դրամ, դրամարկղային ծախսերը՝ 2,399,890.3 հազար դրամ: Միջոցառումը կատարվել է 72.7%-ով կամ պակաս 900,109.7 հազար դրամով: Շեղումը պայմանավորված է նրանով, որ աջակցություն ստանալու նպատակով դիմող շահառուների քանակը նախատեսվածից քիչ են կազմել: Միջոցառման շրջանակներում նախատեսված 1,500 տնտեսավարողների դիմաց աջակցություն ստացել են 1,340 տնտեսավարողներ: Միջոցներն ուղղվել են զբոսաշրջությանն ուղակիորեն առնչվող առանձին ոլորտների տնտեսավարողներին կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման, գործունեության շարունակականության և աշխատատեղերի պահպանման նպատակով աջակցությանը:

Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման 25-րդ միջոցառման շրջանակներում իրականացվող աջակցության տրամադրում միջոցառման համար 2020 թվականի տարեսկզբին ֆինանսական և ոչ ֆինանսական պլանային ցուցանիշներ չեն հաստատվել, քանի որ միջոցառումը մեկնարկել է 2020 թվականի սեպտեմբեր ամսից: Միջոցառման ճշտված պլանը կազմել է 250,000.0 հազար դրամ, դրամարկղային ծախսերը՝ 36,134.7 հազար դրամ: Շեղումը պայմանավորված է նրանով, որ նախատեսվել էր 60 աջակցություն ստացող տնտեսվարողների համար, սակայն աջակցություն ստացել են 16 տնտեսվարողներ, ինչը պայմանավորված է նրանով, որ ներկայացված հայտերից ոչ բոլորն են համապատասխանել միջոցառման չափանիշներին՝ միջոցառման շահառու կարող են հանդիսանալ զբոսաշրջության ոլորտը սպասարկող, տնտեսական գործունեության H49.3, H49.42 և N79 դասակարգիչները հայտարարագրած տրանսպորտային ընկերությունները: